ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈԴԵՔՍ

Ընդունվել է Համաշխարհային բժշկական ասոցիացայի 3-րդ գլխավոր ասամբլեայի կողմից, Լոնդոն, Անգլիա, 1949թ. հոկտեմբեր
և փոփոխվել 22-րդ Համաշխարհային բժշկական ասամբլեայի կողմից, Սիդնեյ, Ավստրալիա, 1968թ. օգոստոս,
և 35-րդ Համաշխարհային բժշկական ասամբլեայի կողմից, Վենետիկ, Իտալիա, 1983թ. հոկտեմբեր,
և 57-րդ ՀԲԱ գլխավոր ասամբլեայի կողմից, Պիլանեսբերգ, Հարավային Աֆրիկա, 2006թ. հոկտեմբեր

ԲԺՇԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	մշտապես ներկայացնի իր անկախ մասնագիտական դիրքորոշումը և պահպանի մասնագիտական վարվելակերպի բարձրագույն նորմերը:
ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	հարգի իր բուժումն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ իրավասու պացիենտի իրավունքը:
ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	թույլ չտա, որ իր դիրքորոշումը ենթարկվի անձնական շահի կամ անազնիվ խտրականության ազդեցությանը:
ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	տրամադրի մասնագիտորեն և բարոյապես լիարժեք անկախ և համարժեք բժշկական ծառայություններ՝ պահպանելով մարդու արժանապատվության նկատմամբ հարգանքը և հոգատարությունը:
ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	լինի ազնիվ պացիենտների և գործընկերների հետ և զեկուցի համապատասխան մարմիններին այն բժիշկների մասին, ովքեր գործում են էթիկայի կամ իրավասության սահմաններից դուրս կամ զբաղված են խաբեությամբ կամ խարդախությամբ:
ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	չստանա որևէ ֆինանսական օգուտ կամ ակնկալի այլ շահ՝ պացիենտին զուտ ուղեգրելիս կամ հատուկ նշանակակումներ կատարելիս:
ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	հարգի պացիենտների, գործընկերների և առողջապահության ոլորտի այլ մասնագետների իրավունքներն ու նախապատվությունները:
ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	ընդունի իր կարևոր դերը հանրության կրթման գործում, սակայն մեծ զգուշություն դրևսորի հայտնագործությունները, նոր տեխնոլոգիաները կամ բուժման նոր մեթոդները ոչ մասնագիտական միջոցներով հրապարակելիս:

ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	պաշտոնապես հաստատի միայն այն, ինչն ինքն անձամբ է ստուգել:
ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	ձգտի լավագույնս օգտագործել առողջապահական միջոցներն ի շահ պացիենտների և նրանց համայնքների:
ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	ձգտի գտնել համարժեք խնամք և ուշադրություն այն դեպքերում, երբ պացիենտը տառապում է հոգեկան կամ ֆիզիկական հիվանդությամբ:
ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	հարգի տեղական և ազգային էթիկայի նորմերը:

ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԺՇԿԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	մշտապես հիշի մարդու կյանքի նկատմամբ հարգանքի իր պարտավորության մասին:
ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	բժշկական օգնություն տրամադրելիս գործի ըստ պացիենտի առավելագույն շահերի:
ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	իր պացիենտին վերաբերվի լիարժեք վստահությամբ և ապահովի նրա համար ողջ գիտական միջոցների մատչելիությունը: Եթե որևէ հետազոտությունը կամ բուժումը բժշկի հնարավորություններից վեր է, նա պետք է խորհրդակցի անհրաժեշտ հնարավորություններ ունեցող բժշկի հետ կամ պացիենտին ուղեգրի նրան:
ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	հարգի գաղտնապահության նկատմամբ պացիենտի իրավունքը: Գաղտնի տեղեկատվության բացահայտումը էթիկայի սահմաններում է, եթե պացիենտը համաձայն է, առկա է նրան կամ այլոց վնասի սպառնալիքի իրական և անհետաձգելի վտանգ կամ այդ վտանգը կարող է վերացվել միայն գաղտնիության սկզբունքի խախտմամբ:
ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	որպես մարդասիրական պարտավորություն ցուցաբերի անհետաձգելի օգնություն, քանի դեռ չի հավաստիացել, որ այլ մարդիկ ցանկանում են և կարող են տրամարդել տվյալ օգնությունը:

ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	որպես երրորդ կողմ հանդես գալու դեպքում համոզվի, որ պացիենտը լիարժեքորեն տեղեկացված է տվյալ իրավիճակի վերաբերյալ:
ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	չմտնի իր ներկա պացիենտի հետ որևէ սեռական, բռնի կամ չարաշահող հարաբերության մեջ:

ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԺՇԿԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	գործընկերներին վերաբերվի այնպես, ինչպես ինքը կցանկանար, որ նրանք վերաբերվեն իր հետ:
ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	պացիենտներին գրավելու նպատակով ՉԽԱԹԱՆԻ իր գործընկերների պացիենտ-բժիշկ փոխհարաբերությունները:
ԲԺԻՇԿԸ ՊԵՏՔ Է	բժշկական անհրաժեշտության դեպքում հաղորդակցվի նույն պացիենտի բուժման մեջ ներգրավված գործընկերների հետ: Այսպիսի հաղորդակցումը պետք է հարգի պացիենտի գաղտնիությունը և սահմանափակվի միայն անհրաժեշտ տեղեկատվությամբ: